ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/382 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	ՉԺՀ	չափեր։ պետք է լինեն առնվազն2530x6500x3470 մմ։ Կարող են լինել տարբերություններ առնվազն 20 սմ-ի սահմաններում։ Նյութեր՝ պետք է լինեն փշատերև ծառատեսակների փայտ (խեժափիճի), խեժափիճի և սոճու տախտակներ, մետաղ, չժանգոտվող պողպատ, վեցաթել ամրացված պոլիպրոպիլենային պարան, ռետին։ Համալրում պետք է լինի չժանգոտվող պողպատից սղարան՝ 1 հատ, դեկորատիվ տարրեր՝ 1 հավաքածու, հենասյուներ՝ 6 հատ, սանդուղք՝ 1 հատ, հատակ՝ 1 հավաքածու, ուղղահայաց ձող՝ 1 հատ, ճոճանակ՝ կախոցով՝ 1 հատ, ամրակների հավաքածու՝ 1 հավաքածու Կառուցվածք Խաղային համալիրը պետք է բաղկացած լինի մեկ հարթակից և ռետինե կախոցով ճոճանակից։ Հենասյուները պետք է պատրաստված լինեն առնվազն 140 մմ տրամագծով գլանաձև մշակված խեժափիճու գերանից։ Տնակի շրջանակը, խաղային և դեկորատիվ տարրերը պետք է պատրաստված լինեն A դասի սոճու մշակված տախտակներից՝ առնվազն190 × 35 մմ և առնվազն 90 × 35 մմ չափերով։ Տնակի հատակը պետք է պատրաստված լինի խեժափիճու տախտակներից՝ առնվազն 25 × 140 × 4000 մմ և առնվազն 25 × 190 × 6000 մմ չափերով, իսկ հատակի շրջանակը՝ առնվազն100 × 100 մմ խեժափիճու փայտանյութից։ Լայնական ձողերը պետք է պատրաստված լինեն առնվազն 90 մմ տրամագծով գլանաձև մշակված խեժափիճու գերանից։ Համալիրում պետք է առկա լինեն

		իջնելու ձող, որը պետք է պատրաստված լինի առնվազն 33.7 մմ տրամագծով և առնվազն 2 մմ պատի հաստությամբ չժանգոտվող պողպատե խողովակից, սանդուղքի աստիճաններ, որոնք պետք է պատրաստված լինեն առնվազն 33.7 մմ տրամագծով և առնվազն 2 մմ պատի հաստությամբ չժանգոտվող պողպատե խողովակից, բարձրանալու պարան՝ պատրաստված առնվազն d=16 մմ վեցաթել ամրացված պոլիպրոպիլենային պարանից, ռետինե կախոցով ճոճանակ, որի կազմի մեջ մտնում են չժանգոտվող պողպատից շղթան և կախոցի ամրակները: Սղարան Խաղային համալիրի կազմում պետք է ներառված լինի 1 ուղիղ սղարան: Ուղիղ սղարանը՝ պետք է լինի առնվազն h = 1.5 մ, բաղկացած սահող մակերեսից և կողային պաշտպանիչներից: Սահող մակերեսը պետք է պատրաստված լինի առնվազն2 մմ հաստությամբ չժանգոտվող պողպատի թերթից, իսկ կողային պաշտպանիչները՝ առնվազն 26.9 մմ տրամագծով և առնվազն 2 մմ պատի հաստությամբ կլոր չժանգոտվող պողպատե խողովակից: Ուղիղ սղարանի մեկնարկային հարթակը պետք է համալրված լինի լայնական ձողով, որը պետք է պատրաստված լինի առնվազն90 մմ տրամագծով գլանաձև մշակված խեժափիճու գերանից: Ամրակներ Համալիրում պետք է օգտագործվեն չժանգոտվող պողպատից ամրակներ: Պտուտակային միացումների դուրս եկող մասերը և խողովակների բաց ծայրերը պետք է փակված լինեն պլաստիկ խցաններով: Տարրերի ծածկույթ 1. մետաղ՝ պետք է լինի փոշեներկային ցինկային նախաներկ, փոշեներկ, 2. փայտանյութ՝ պետք է լինի լեսսիրացնող նախաներկ, ջրադիսպերսիոն լաք Տրվում է մեկ տարվա՝ 365 օր, երաշխիք: Ապրանքի փոխադրումը և տեղադրումը) մինչև Գնորդի պահեստային տնտեսություն՝ համապատասխան փաթեթավորմամբ, մինչև տեղադրման վայր՝ ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, ըստ Գնորդի նշած հասցեի, կատարում է վաճառողը: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Գնորդի կողմից պահանջի դեպքում վաճառողը պետք է ներկայացնի անվտանգության և համապատասխանության հավաստագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЪՔ-ԷԱՃԱՊՁՐ-26/382 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
11		